ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ, ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА
ГЕГАРКУНИКСКИЙ РЕГИОНАЛЬНЫЙ
ГОСУДАРСТВЕННЫЙ КОЛЛЕДЖ, ГНКО
ДИРЕКТОР
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
GEGHARKUNIK REGIONAL
STATE COLLEGE, SNCO
DIRECTOR

1401, ք. Մարտունի, Շահումյան 12, Հեռ./Тел./Tel. 0.262.4.11.51, 0.262.4.38.15, Ֆաքս/Факс/Fax: (374262).4.11.51
1401, г. Мартуни, ул. Шаумян 12, T. Martuni, str. Shahumyan 12, E-mail: martunuqolej@mail.ru

N 222 - ,,11,, 09 2023թ.

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի տեղակալ
Արաքսյա Սվաջյանին

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2021թ. թիվ 48-Ն հրամանով հաստատված գործող կարգի, տեղեկացնում ենք, որ ,,Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ,, ՊՈԱԿ-ում առաջացել են Ռուսաց լեզու առարկայի, ,,Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում,, մասնագիտության մոդուլների դասախոսների՝

1. Ռուսաց լեզու- 16 ժամ /շաբաթական/
2. Գծային հանրահաշվի տարրերը - 78 ժամ /ամսական/
3. Ծրագրավորման հիմունքներ - 77 ժամ /ամսական/
4. Անալիտիկ երկրաչափություն - 53 ժամ /ամսական/
4. Մաթ. անալիզի հիմունքներ - 59 ժամ /ամսական/
5. Դիսկրետ մաթեմատիկայի հիմունքներ - 36 ժամ /ամսական/
6. Դիսկրետ մաթեմատիկայի կիրառություն - 36 ժամ /ամսական/

և ,,Կարի արտադրություն,, մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի , որակավորումը՝ դերձակ, /0.5 դրույք/ թափուր տեղեր:

Թափուր տեղի Մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

1) Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2) Մասնագիտական մոդուլների դեպքում` տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումը անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2020թ. թիվ 48-Ն հրամանով նախատեսված կարգի՝ մեկ փուլով, բանավոր առաջադրանքով:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին ներկայցնում է .

1. Դիմում /Ձև 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/,
3. Անձնագիրը և հանրային ծառայության համարանիշը,
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք /առկայության դեպքում/,
5. Ինքնակենսագրություն /Ձև 4/,
6. Մեկ լուսանկար 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքի վկայական,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9. Հրապարակված հոդվածների ցանկը և գիտական աստիճանը, կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/:

-Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

-Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից` 2023թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր ժամը 10$^{00}$-ից մինչև 15$^{00}$-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենսդրությամբ սահմանված այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. սեպտեմբերի 28-ին ժամը 14$^{00}$-ին, ,,Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ,, ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Շահումյան -12 :

Տեղեկությունների համար զանգահարել.

0262.4.11.51

0262.4.15.46

077.24.01.72

Հարգանքով.

Յու. Սուքիասյան